ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ ըստ օրենքի ժառանգության վկայագրի համաձայն (ըստ օրենքի ժառանգության 03.05.2016թ հ.3167 վկայագիր) Արշակունյաց պողոտայի հ.54 շենքի հ.44 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցում կատարելուց հետո, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սոնյա Աճիկյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով նախատեսվում է Արշակունյաց պողոտայի հ.54 շենքի հ.44 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Սոնյա Աճիկյանին:

Արշակունյաց պողոտայի հ.54 շենքի հ.44 բնակարանը փոխանցվել է Երևան համայնքին (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.3167 վկայագիր, տրված 03.05.2016թ.):

Քննարկվող բնակարանի սեփականատեր է հանդիսացել քաղաքացի Վալենտինա Կարպովան, ով 2011 թվականին մահացել է:

Համաձայն 04.05.2016թ «Ֆրունզե-10» համատիրության կողմից ներկայացված հ.192 տեղեկատվության՝ քաղաքացի Սոնյա Աճիկյանը տևական ժամանակ խնամել է Վալենտինա Կարպովային, իր միջոցների հաշվին հոգացել է գույքի օգտագործման հետ կապված հարցերը՝ կատարելով բնակարանի պահպանման, սպասարկման համար անհրաժեշտ պարտավորությունները, սակայն Վալենտինա Կարպովայի հետ ազգակցական կապ չունենալու պատճառով չի կարողացել նրա մահից հետո ժառանգել բնակարանը:

ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի կողմից 04.05.2016թ. տրված հ.ԼՍ-23338 տեղեկանքի համաձայն՝ Սոնյա Աճիկյանի անվամբ ՀՀ-ում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Շենգավիթի անձնագրային բաժանմունքի 04.05.2016թ. հ.22/1-1457 գրության՝ վերջինս հաշվառված է քննարկվող բնակարանում:

Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի, անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ